# ՂԱՐԱԲԱՂՆ ՈՒՆԻ ԻՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂՆԵՐԸ

ԼՂՀ տարածքում հայկական մշակույթի հուշարձանների վերականգնում. այդպիսի խնդիր է դրել իր առջեւ վերջերս Շուշի քաղաքում ստեղծված «Վերածնունդ» փոքր ձեռնարկությունը: Իր գործունեությունը «Վերածնունդը» սկսել Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու (X դ.) վերականգնումից, որն ընդհատվել էր 1988 թ.: Վերականգնող-վարպետ Վոլոդյա Բաբայանի խոսքերով, վերականգնողական աշխատանքները ադրբեջանցի վայրագներից տուժած եկեղեցու գմբեթների, զանգակատների եւ տանիքների վերանորոգումը իրականացնում են որակյալ մասնագետները, որոնց նպատակն է մոտ ապագայում ճարտարապետական այս եզակի կերտվածքին վերադարձնել նախկին կերպարը: Վերականգնողները մոտ ապագայում նախատեսում են Շուշի քաղաքի Կանաչ ժամ եկեղեցու վերականգնումը, որը նույնպես վնասվել է վերջին տարիների ընթացքում:

«ՓԱՍՏ-ՄՈՒՆՔ»